ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ԴՐՈՇՆԵՐԸ

Ա. Ն. ՊԱՏԲԿ

Հայկական դրոշների ձևերի հարցով առաջին անգամ գրաղվել է Ղ. Ինճիճյանը («Նախնություն Հայաստանյաց», հատ. Բ), սակայն շատ հարևանցիորեն։ Հ. Վ. Հացունին հատուկ ուսումնասիրություն է նվիրել դրան[1], սակայն նա էլ, սկզբնաղբյուրների սակավության պատճառով, ստիպված է եղել բավարարվել գուշակություններ անելով։

Այս հոդվածում մենք փորձում ենք պատմիչների համառոտ հիշատակությունների հիման վրա մեր դրոշներից ամենահավաստիների ձևերը պատկերել։ Ինչ վերաբերում է Կիլիկյան հայկական թագավորության դրոշակին, ներկայացնում ենք պատմականորեն վավերական մի քանի դրոշաձևեր։

Արտաշիսյան հարստության հիմնադրի մասին խոսելիս Մովսես Խորենացին հիշատակում է «նշանքն Արտաշիսի»[2], Հնում «նշան» բառը գործ էր ածվում նաև դրոշի իմաստով։ Կարելի է ենթադրել, որ առաջին անգամ Արտաշեսի թագավորության ժամանակ չէ, որ հայ պետական դրոշ կը գործածվում։ Շատ հնարավոր է, որ դեռ ավելի վաղ ժամանակներից Հայաստանում բնակվող յուրաքանչյուր ցեղախումբ և ուրարտական հզոր պետությունը ունեցել են իրենց ինքնուրույնությունը խորհրդանշող նշաններ կամ դրոշներ։ Հատկապես այս վերջիններից ունենք մի թանկագին նմուշ՝ Արգիշտի Ա-ի բրոնզյա սաղավարտի վրա փորագրված, որը մարտակառքի ետևում կանգնեցված տեգի ընին կից մի փոքր դրոշակ է (նկ. 1)։

Խորենացուց տեղեկանում ենք նաև հայ Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակի արքայական նշանի մասին. «Արծուիս առաջի նորա կրէին»։ Դա հավանաբար եղել է ձողի վրա ամրացված արծվի քանդակ։ Պարթևների, մանավանդ Սասանյանների մոտ էլ արծվենշանը արքայական գլխավոր նշաններից է եղել։

Գալով Տիգրան Մեծի դրոշի հարցին, պիտի ասել, որ թեև պատմական որոշակի հիշատակություն չունենք, սակայն նրա դրամները մեզ տալիս են առեղծվածի բանալին (նկ. 2)։ Նրա թագի խորհրդանիշներն են՝ կենտրոնում ճառագայթավոր արևը, իսկ երկու կողմում՝ մեկական արծիվ գլուխները դեպի արևը դարձրած։ Արևի պաշտամունքը եղել է նաև հայերի մոտ, իսկ արծվի խորհրդանիշը, ինչպես հայտնի է, վաղուց գործածական է եղել թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում։ Պետք է ենթադրել, որ արևի շուրջը գույգ արծիվ ունեցող նշանը Տիգրան Բ-ին էր յուրահատուկ։ Շատ բնական է, որ նա նույնատիպ ձևավորումով ստեղծած լիներ նաև իր դրոշը։ Ուստի մենք փորձել ենք պատկերել այդ դրոշը հենց նույն խորհրդանշաններով, քառակուսի մի պաստառի վրա (տախտակ Ա, նկ. 1)։ Ընդհանրապես, տվյալ ժամանակի արքունական սովորության համաձայն, դրոշը կրում էին տեգի ծայրին կապված հորիզոնական փոքրիկ գավազանից կախված։ Տիգրանյան դրոշը ծիրանագույն էր լինելու, ինչպես արևելյան արքաներինը, իսկ վրայի խորհրդանիշերը՝ ոսկեգույն ասեղնագործած, պաստառի ստորին եզրը՝ ծոպերով երիզված, ինչպես պատկերված է հռոմեական կայսրերից Լուկիոս Վերոսի մի դրամի վրա։

Տիգրանյան թագի տիպը շարունակեց գործածվել նաև նրա հաջորդների կողմից, ինչպես տեսնում ենք Արտավազդ Բ-ի գլխին (նկ. 3)։ Տրամաբանական է, ուրեմն, եզրակացնել, որ

---

1 Հ. Վ. Հացունի, Հայ դրոշները պատմության մեջ, Վենետիկ, 1919։ Վերջերս հրատարակվել է Կ. Ստեփանյանի «Հայկական դրոշներ և զինանշաններ» գրքույկը (Երևան, 1966, 54 էջ), ուր մինչև 1828 թ. վերաբերող նյութերը, Հացունու գրքի համեմատությամբ, որևէ նորություն չեն պարունակում։

2 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, Բ, ԿԶ։

3 Նույն տեղում, Բ, Է։

երկար ժամանակ պահպանվեց նաև նրա ստեղծած դրոշը թե՛ արքունիքում և թե գինվորական ասպարեզում։

Հայաստանի վրա Հռոմի աշխարհակալական հարձակումները շարունակվեցին Արտավազդ Բ-ի և նրա մի քանի հաջորդների օրոք ևս։ Իրենց ավարառու հաղթանակները հավերժացնելու համար հռոմեական կայսրերը հատուկ դրամ էին կտրում «Պարտյալ Հայաստան» դրոշմով, դրամի վրա պատկերելով գինաթափ հայ գերիներ կամ ծնկաչոք մի հայ թագուհի և այլն։ Նկ. 4-ում ներկայացրել ենք Լուկիոս Վերոսի մի դրամը (163—164 թթ.), որը հստակ պատկերացման համար մեծացրել ենք, հարգանք մնալով բնագրին։ Դրամի վրա տեսնում ենք Հայաստանը, թագակիր թագուհու կերպարանքով, վահանը կողքին, իսկ վերևում՝ նրա երեք դրոշները։ Վահանի վրա հակված դրոշին համապատասխան կողմել ենք տիգրանյան դրոշաձը՝ հորիզոնական գիրքով։ Թագուհու թիկունքի վերևի երկու դրոշները ձևով նույնատիպ են, սակայն նիզակի ընի շուրջը ամփոփված։

Հայ Արշակունիների դարաշրջանում էլ, անշուշտ, պահպանվել էր ազգային դրոշաձևը, քանի որ հենց Վաղարշակի ժամանակներից գործվենչանը արքայական սիմվոլներից էր։ Պապի սպանությունից հետո Հայ արքունիքը, Բյուզանդիայից հիասթափված, որդեգրեց պարսկական կողմնորոշում։ Այդ առթիվ Շապուհի առաքած սիրաշահական նվերների մասին Փավստոսը գրում է. «Եվ պարսից թագավորը Սուրենի ձեռքով Զարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ և պատմուճան և թագավորական վառ—դրոշակ»[4]։



Նկ. 1

Հիշատակելով այդ եղելությունը, Հացունին գրում է. «Առարողը պարսիկ էր, որով հղածը պարսկական էր», նաև՝ «Նվերն ընդունողը պիտի գործածեր դայն, պատվելու համար նվիրատուն, ուրեմն հիշյալ դրոշն հարմար էր կամ հայ արքունյաց»[5]։

Մենք համաձայն չենք այդ մեկնաբանությանը։ Եթե ընդունենք, որ Շապուհի ուղարկած մյուս նվերները՝ «թագավորական թագ և պատմուճան, սամույր, գլխո պատիւ զարգմանակ ոսկի...» և այլն պարսկական էին և «հարմար նաև հայ արքունյաց», ապա «վառ»-ը՝ դրոշը, չէր կարող պարսկականը լինել։ Հայկական արքունիքի համար դա պիտի նշանակեր բոլորովին անձնատուր լինել, հրաժարվել ինքնուրույն և անկախ պետություն լինելուց, քանի որ դրոշը խորհրդանիշն է անկախ պետականության։

Ֆեոդալական Հայաստանում կային չորս մեծ բդեշխություններ ու բազմաթիվ նախարարություններ, որոնցից գեթ գլխավորները ունեցել են իրենց տոհմական դրոշակը, հավանաբար նաև զինանշանը։ Այդ մասին հարևանցի հիշատակություններ կան մեր պատմագիրների մոտ։ Այսպես, երբ Գրիգոր Լուսավորիչը ուղևորվում է Կեսարիա, նրան ուղեկցում են շատ երևելի իշխաններ «զօրօք, նշանակաւք, իւրաքանչիւր գնդօք»[6]։ Իսկ Ներսես Պարթևի հայրապետական ընտրության առթիվ՝ «ի մի ժողով կուսակեցան առ արքայն Արշակ մեծամեծք նահապետք ազգաց,

4 Փ. Բ ու զ ա ն դ, Պատմություն Հայոց, էջ 245—246 (թարգմ. Ս. Մալխասյան)։
5 Հ. Վ. Հ ա ց ո ւ ն ի, նշվ. աշխ., էջ 18։
6 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Վենետիկ, 1862, էջ 602։

Ил. 2 Ил. 3



Ил. 4



Ил. 5—6

ազգաց, տոհմաց, տոհմաց, գնդիս և դրօշուց տեարք, ամենայն սատրապք և նախարարք պետք և իշխանք, զօրավարք և սահմանապահք...»։

Ահա և մի այլ վկայութիւն այն մասին, թե Արշակ թագաւորի հրամանով սպարապետ Վասակ Մամիկոնյանը ինչպես է պատերազմական զորահավաք կատարում. «Ինիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք... համակ հեծելազօրք զրահաւորք, պատենազենք, սաղաւարտաւորք, դրօշաւորք, կազմ նշանաւորք բազմաձայն փողարօքն»8. Ուրեմն, բանակում հատուկ դրոշակակիր զորականներ կային։

Դրոշի նվիրականության մասին ուշագրավ մի վկայություն է նաև հետևյալը։ Երբ Պապ թագավորն ու Ներսես հայրապետը բարձրացել էին Նպատ լեռան վրա՝ պարսից դեմ հայկական բանակի ճակատամարտը դիտելու, նրանց մոտ է գալիս սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը և «երէր զնշանսն իւր և զղէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի օրհնեսցէ»։

Հիշատակության արժանի է նաև ուրիշ մի դրվագ. դավաճան Մերուժանի դեմ պատանի Արտավազդը ելնում է՝ «...ինքեանք վառեալք կազմեալք ի պատերազմն, ի մի վայր գումարեալք, նշանն արձակեալք դրօշս փողփողեալս»10.

Ավարայրի ճակատամարտից առաջ պարսից բանակի հրամանատարը լրտեսների միջոցով ուզում է տեղեկանալ, թե հայկական բանակի մեջ քանի «պարագլուխս կային» և՝ «դրօշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր»11։ Այս նշանակում է, որ յուրաքանչյուր նախարարություն, գլխ նրանցից «պարագլուխ»-ները, պատերազմին մասնակցելու էին եկել իրենց տոհմական դրոշները պարզած։

Մեր մատենագիրներից կատարած այս մի քանի մեջբերումներով ապացուցվում է նախարարների մոտ տոհմական դրոշի գործածությունը. իսկ թե ինչպիսին էին դրանք, ինչ գույնի էին, մանավանդ ինչ նշան էին կրում՝ մնում է անհայտ։ Միայն Մամիկոնյանների դրոշի մասին Փավստոսը տալիս է հետևյալ շփոթ բառերը. «Ականաղգիր, աղանաղրօշք, արծվենշանք, վարժնականիշք», որոնք, հավանաբար, հետագայում ընդօրինակող գրիչների աղավաղումների հետևանք են։ Հացունին, վկայակոչելով Սովսերք Զ. 17-ում Մեսրոպ պատմիչի խմբագրածը, ճշտում է՝ «աղեղնաձիգք, աղեղնաղրօշք, արծվենշանք»12։ Այդ պարզաբանման շնորհիվ տեղեկանում ենք, որ Մամիկոնյանների դրոշանշանը եղել է աղեղնավոր մի արծիվ, և այդ հիման վրա էլ պատկերել ենք այն (տախտակ Ա, նկ. 8)։ Ի նպաստ արծվենշանի կարելի է հիշել նաև Մամիկոնյան Մանվել սպարապետի, իբրև գահի խնամակալի, Շապուհից ստացած նվերների պարագան՝ «շիկակարմիր խորան և ի վերա խորանին արծուի նշան»։ Վերջինս դուցե Մամիկոնյան տոհմին հատուկ նշան է եղել։

Մամիկոնյաններից հետո Բագրատունիները մեր նախարարությունների մեջ վաղուց ակնառու դիրք էին գրավում, մանավանդ որպես «թագադիրներ»։ Սակայն նրանց նախարարական և ապագա պետական դրոշի մասին մեր պատմագիրները նույնպես ժլատ են եղել։ Աշոտ Բագրատունու մասին Հովհաննես պատմագիրը հիշել է, թե նա Բյուզանդիոնի Կոստանդ կայսրից իբրև պատիվ ստացել է «ոսկեգործ վառիւք»13։ Դարձյալ նույն պատմիչը տեղեկացնում է, թե Աշոտ Ա Բագրատունու դագաղը զարդարված է եղել «ոսկեգործ վառիւք» (ԻԹ), իսկ թե ինչպիսի նշան էր կրում այն, դժբախտաբար չի հիշատակել։

Ավելի ուշ ժամանակի մի պատմիչ՝ Մինաս Համթեցին (1698 թ.) կիլիկյան գինանշանի մասին հիշելուց հետո գրում է. «...Իսկ առաջին թագաւորքն հայոց, որ ի Հիւսիս, զարծիւ նշան էրէին»14։ Հյուսիս ասելով նա ակնարկում է Բագրատունիներին։ Արդարև, Անիի Մայր տաճարի հարավային պատի խորշերից մեկի վերևում կա թևաբաց արծվի մի քանդակ15 (տախտակ Ա,

7 Փ. Բուզանդ, Դ, գ։
8 Նույն տեղում, Ը, ի։
9 Նույն տեղում, Ս, գ։
10 Նույն տեղում, Ն, խգ։
11 Ղազարեվ, Վենետիկ, 1859, էջ 180։
12 Հացունի, նշվ. աշխ., էջ 55։
13 Նույն տեղում, էջ 31։
14 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 235։
15 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, էջ 341։

նկ. 3)։ Սակայն այդ նույն խորհրդանիշը չի սահմանափակվում միայն Անիի հուշարձաններով և ոչ էլ նույն ժամանակաշրջանով։ Արծվեքանդակի հանդիպում ենք դեռ VII դարից, Զվարթնոցի խոյակների վրա (տախտակ Ա, նկ. 4), ավելի ուշ՝ նաև Աղթամարի սբ. Խաչ եկեղեցու բազմադան քանդակների մեջ։ Հետագա դարերում, Բագրատունիների թագավորության կործանումից հետո կառուցված եկեղեցիների վրա էլ հանդիպում ենք արծվի քանդակների (նույնիսկ երկգլխանի), ինչպես, օրինակ, XII դ. Մամիկոնյան տոհմի շառավիղների կառուցած Դսեղի (Բումանյան) եկեղեցու զանգակատան վրա[16], Բարձրաբաշ սբ. Գրիգոր եկեղեցու արևելյան պատուհանի վերևում[17] (տախտակ Ա, նկ. 5) և էլի ուրիշ վայրերում։

Անիի միջնաբերդի պարսպի գլխավոր մուտքի վերևում դտնվող առյուծի բարձրաքանդակը (նկ. 5) չենք կարող զինանշանի կամ դրոշանշանի սիմվոլներից համարել, ինչպես կարծում է Հացունին, քանի որ այդ պարիսպները Բագրատունիներից հետո քանդվել կամ վերանորոգվել են[18]։

Գեղարդավանքի վիմափոր եկեղեցու մեջ դտնվող դույզ առյուծի քանդակի մասին Գարեգին Հովսեփյանը դրում է. «Նշ էր Պռոշյանների զինանշանը. բոլորովին հաստատ հիշատակություն չունենք. բայդ անհավանական չէ, որ իրար դեմ կանգնած և շղթայված առյուծ (նկ. 6) և եզ կամ նրանց գլուխները, որոնք կրկնվում են Պռոշյանների քանդակների և մանրանկարչության մեջ»[19]։

Մենք անհավանական ենք համարում այդ ենթադրությունը։ Նախ, շղթայված առյուծը հարմար չէ որպես զինանշան։ Ավելի հավանական է այդ նույն առյուծների միջև բանդակված արծիվը, մագիլներում մի գառ (տախտակ Ա, նկ. 6)։

Դալով նույն տախտակի 7-րդ նկարի խաչանիշ դրոշին, գա պատկերել ենք հիմնվելով Թովմա Արծրունու այն տեղեկության վրա, ըստ որի Բագրատունի Սմբատ թագավորի առաջից տանում էին խաչանիշ դրոշակ՝ «տալ առաջի նորա նշանակս խաչադրոշս»[20]։

Եթե ընդունենք, որ Բագրատունիների ծիրանագույն դրոշի խորհրդանիշն է եղել վաղնջական սիմվոլը՝ արծիվը, Թովմա Արծրունու վերոհիշյալ տեղեկությունը գալիս է ոչ թե հերքելու, այլ լրացնելու այս փաստը։ Եթե արծվեդրոշը եղել է բանակում ռազմական դրոշ, ապա խաչանիշը եղել է արքայականը կամ՝ ընդհակառակը։

Ռուբինյանների պետական դրոշի մասին մեր մատենագիրները նույնպես լռում են։ Սակայն, բարեբախտաբար, Ռուբինյաններից մեզ հասել են բազմաթիվ դրամներ ու մանավանդ՝ այլ աղբյուրներից արժեքավոր փաստեր։

Ղ. Ինճիճյանը, ինչպես նշել ենք, առաջին անգամ դրաղվելով այդ հարցով, գրել է. «Թագաւորութեան աղգիս դրօշ յառաջին ժամանակս էր արծիւ. իսկ յաւուրս թագաւորութեան Ռուբինեանց՝ առիւծ. զյիշատակութիւն այսորիկ գտանեմք միայն առ Մինասայ Հեթմացւոյն, որ ի թղթ. 48 վասն Լեւոնի առաջին պսակաւորի, գրէ. «Կայսերքն ըստ անուան՝ առիւծ առմա-նշան-առաքեցին սմա, զոր բարձեալ ի վերա դրօշի սեփհականեալ մնաց ի հայս մինչև ցվախճան թագաւորութեանս կիլիկեցւոց. իսկ առաջին թագաւորքն, որ ի հիւսիս, զարծիւ նշան կրէին»։

Արդարև, Լևոն Ա թագավորի կնիքի (նկ. 7) և դրամների վրա դրոշմված են տեսնում մեկ կամ դույզ առյուծի սիմվոլ. սակայն ոչ թե «կայսերքն ըստ անուան առիւծ առմա» առաքած լինելուն համար, ինչպես գրել է Մ. Համբեցին, այլ նախապես դա Լևոնի ստեղծած զինանշանն է եղել։ Նրա հաջորդներն էլ շարունակել են դա պահպանել իրենց դրամների վրա։ Առյուծի կողքին հաճախ նշված է լինում մի երկարավուն խաչ, իսկ սրա տակ անկյուններում՝ մեկական փոքր խաչ։ Այդպիսի քանդակով մի շիրմաքար է հայտնաբերված Կիպրոսում (տախտակ Բ, նկ. 6)։ Ըստ երևույթին, մի հայ արքայազնի շիրմաքար է դա, քանի որ նրա եզրերին եղել է հայերեն արձանագրություն, որից մի քանի տառ դեռ մնացել է[21]։ Եթե նկատի ունենանք նաև,

16 Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 6։
17 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 124։
18 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 40—44։
19 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք, պրոկ Ա, էջ 86։
20 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 268։
21 J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris, 1919, էջ 227 և 237։

որ Կիլիկյան վերջին Թագավոր Լևոն Ե-ի գերեզմանի վրա, Փարիզի Սեն-Դենի եկեղեցում, նույն-պիսի զինանշան կա, ապա կունենանք Կիլիկյան Հայ արքունիքի պետական դերը (տախտակ Բ, նկ. 8)[22]։

Մեր երկրորդ տախտակում փորձել ենք համախմբել Կիլիկյան դրոշաձևերը։

Նկ. 1-ում պատկերված դրոշը Հացունին վերցրել է Կիլիկիայի Դրազարկ վանքի գրչագիր Ռ ավետարանում Սարգիս Պիծակի կատարած մանրանկարից, տալով հետևյալ բացատրությունը. «Հայտնի է հոն տակավին ծիրանեգույն վառը, սակայն բաժանված կրկին մասանց. ներքինը՝ չորեքկուսի հավասարակողմ. հին ձևէ իսկ, որոյ վրա կերևի հավասարաթև կամ հունական խաչը, ոսկեծիր կամ ոսկեղեն, և գրված է կտավին մեծագույն մասը։ Իսկ յուր թևոց միջոցներուն մեջ կան ոսկեգիր անորոշ զարդեր, զորս կկարծեմ փրկչական հայ մենագրերը՝ ՏՐ. ԱՄ. ՅՍ. ՔՍ.»[23]։

Նկ. 7

Մենք համաձայն չենք Հացունու այս վերջին մեկնաբանությանը, քանի որ դրոշի գլխավոր խաչի չորս անկյուններում մեկական փոքրիկ խաչի դետեղումը եղել է պետական զինանշանի, հետևաբար նաև դրոշանշանի ավանդական ձևը, ինչպես տեսնում ենք սույն տախտակի այլ դրոշների վրա։

Մանրանկարի վրա դրոշի առաջամասը երկճղված է, եռանկյունի սուր վերջույթով՝ «ըստ սովորության միջին դարու» (Հացունի, էջ 79)։

Նկ. 2-ի դրոշի սիմվոլը վերցրել ենք Լևոն Ա-ի Վատիկանում պահված առյուծանիշ կնիքից[24] (նկ. 8)։ Նրա դրամների վրա միշտ դրոշմված է թագապսակ և խաչակիր նույն սիմվոլը, ինչ առյուծանիշ կնիքի վրա։ Ուստի մենք հավանական ենք համարում այդ, գեթ որպես արքունական դրոշ։

Նույն տախտակի 3, 4, 5 և 7 նկարների դրոշները ընդօրինակել ենք թուրք պատմաբան Իբրահիմ Հակկիի մի գրքից[25]։ Դրանք, ըստ հեղինակի, պատկանում են Կիլիկյան թագավորությանը և այն հայ իշխաններին, որոնք պահել են իրենց դիրքը մահմեդական գերիշխանության ժամանակ։ Իսկ նկ. 9, 10, 11 և 12-ի դրոշները պատկանում են Սերաստիային և նրա շրջակայքին, որ դարձյալ գտնվել են մահմեդական գերիշխանության տակ։ Այդ դրոշները իրենց գույնով ներկայացված են մագաղաթյա մի քարտեզի վրա, որն այժմ պահվում է Ստամբուլի Թոփ-Գարուի թանգարանում։ Դրոշները պատկերել է իսպանացի ֆրանցիսկյան մի քահանա, որը 1350—60-ական թթ., այլ երկրների թվում, այցելել է նաև Կիլիկիա։ Նա դրել է, թե եղել է

---

22 Նույն տեղում։

23 Հացունի, նշվ. աշխ., էջ 73.

24 Նույն տեղում, էջ 38։

25 Ibrahim Hakki, Topkapi Serayinda deri üzerinde yapilmis haritalar. Istanbul, 1936. էջ 119, 159—163։



Sw. II.



Տախտակ Բ

«Հայկական լեռնապարո կոչված մարզերում, ուր տեսել է 360 գյուղեր և բազմաթիվ դղյակներ[26]։

Վերոհիշյալ բարտեզում կիլիկյան ծովեզրի մոտ Corincho կղզու[27] վերև նշված է մի դրոշակ (նկ. 4)՝ վահանաձև սև ֆոնի վրա, հավասարակող սպիտակ խաչով, չորս անկյուններում՝ մեկական փոքր խաչ դրված, իսկ Ալեքսանդրետի ծոցում նշել է առյուծանիշ դրոշ (նկ. 5), մոտավորապես նման կիլիկյան հայկական դրոշին, մի բան, որ ենթադրել է տալիս այդ ծովեզրյա ամրություններում դեռևս բրիստոնյա մի իշխանության գոյությունը։

Նկ. 3-ում պատկերված դրոշակը թուրք հեղինակը դրոշների իր տախտակում վերագրում է Սվազին, մինչդեռ բացատրության մեջ՝ Կիլիկիային, ըստ ֆրանցիսկյան քահանայի նշումի, և սա է ճիշտը, քանի որ խաչի ձևը և հինգ շուշանաձև թագերը ինքնին այդ են ապացուցում։ Բացի այդ, թուրք պատմաբանը գրում է. «Ֆրանցիսկյան ճանապարհորդի այս տեղերից անցած ժամանակ կարող է պատահել, ուրեմն, որ Կիպրոսի ֆրանկների գերիշխանության տակ կազմակերպված լիներ հայկական մի փոքր իշխանապետություն» (էջ 163)։

Թուրք պատմաբանը հայտնում է, թե Թոփ-Գարուի թանգարանում գտնվում է նաև 1428 թ. Յոհաս դե Վիլլադեստես (Johas de Villadestes) անունով իսպանացի մի աշխարհագրագետի կազմած քարտեզը, ուր յուրաքանչյուր երկրի, քաղաքի կամ բերդի վերևում նշված են եղել համապատասխան դրոշակները։ Նկ. 7-ի դրոշը Վիլլադեստեսի քարտեզի վրա նշված է եղել Տարսոն քաղաքի վերևում, որպես հայկական դրոշ։ «Նորից արտաքին մի ուժի վրա հենվելու պայմաններում, Տարսոնում կարող էր հայկական դրոշակ գոյություն ունեցած լինել»,— գրում է Ի. Հակկին։

Այդ դրոշը բավականին ինքնատիպ է։ Բաց-սրճագույն ֆոնը ձախակողմյան վերին եզրից շեղակի դեպի ցած եռանկյունաձև մի բաժանման է ենթարկված։ Աջակողմի եռանկյան վրա հորիզոնական վեց սև շերտեր են երկարում՝ յոթ ոսկեգույն փոքր խաչերով, իսկ սրճագույն եռանկյան վրա՝ երկու փոքր խաչ կա։ Ըստ թուրք պատմաբանի՝ «քարտեզը կազմված ժամանակ Կիլիկիայում տիրապետում էին Բամազան-Օղլուները։ Ավելի վաղ, 1378 թ. էլ Բամազան օղլի Ահմեդը արդեն հիմնել էր մի անկախ պետություն՝ Ադանայի, Սիսի, Մսիսի, Փիասի և Վարսակի (Վահկա) շրջանների մասում», ուստի նա հավանական է գտնում, որ նրանց գերիշխանության տակ գոյություն ունեցած լինի խաչանիշ դրոշով հայկական փոքր մի իշխանություն[28]։

Ինչ վերաբերում է նույն տախտակի 10 և 11-րդ նկարների խաչանիշ դրոշներին, ապա դրանք ֆրանցիսկյան քահանայի կողմից նշված են եղել Սեբաստիայի երկրամասում, և Վիլլադեստեսի քարտեզում էլ կատարված են նմանօրինակ նշումներ, մի բան, որ պատմական նոր հայտնաբերում է։ Գիտենք, որ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը 1021 թ. Բյուզանդիային դիջել էր Վասպուրականը, դրա փոխարեն ստանալով Սեբաստիան (Սվազ) իր շրջակայքով։ Դրանից հետո պատմական տեղեկությունները շատ աղքատիկ էին։ Հայտնի էր միայն 1399 թ. Լենկ-Թեմուրի պաշարման ժամանակ Սեբաստիայի հերոսական դիմադրությունը հայ իշխանների գլխավորությամբ, որից հետո պատմությունը լռում էր։ Արդ, վերոհիշյալ խաչանիշ դրոշները մեզ դնում են անակնկալի առաջ։

«Արդյո՞ք Սվազը— ասում է թուրք պատմաբանը — այդ թվականներին թուրքերու գերիշխանության տակ քրիստոնյա մի իշխան էր կառավարում, եթե Յոհասի նշած Կարա-կոյունլուների դրոշը և (ֆրանցիսկյան) քահանայի նշածը միասնաբար քննենք, կարելի է հանգել այն եզրակացության, որ սելջուկներին ենթակա կիսանկախ հայկական մի իշխանություն դեռ որոշ ժամանակ հարատևել է»[29]։

Հատիներեն մի ուրիշ քարտեզի վրա Սեբաստիա քաղաքի վերևում նշված է եղել մի դրոշակ, երկու մասից բաղկացած. ձախում՝ սպիտակի վրա կարմիր խաչ, իսկ աջակողմյան մասում՝ հեղին ֆոնի վրա կարմիր մի քառակուսի։ Հայտնի է, որ քառակուսին մոնղոլ էլխանական դինաստիայի նշանն էր (ըստ նրանց դրամների)։

«Տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում պատրաստված այդ երեք քարտեզների համընկնումը մեզ բերում է այն համոզման, որ սելջուկյան պետության հետզհետե կազմալուծ-

---

26 Նույն տեղում, էջ 160։

27 Կոռիկոսն է, որը ծովային նշանավոր ամրություն էր Կիլիկիայում։

28 Ibrahim Hakkı, նշվ. աշխ., էջ 159, 163։

29 Նույն տեղում, էջ 191։

տան պայմաններում մինչև այս բարտեղի պատրաստումն։ Ժամանակը Ովսեպում գործածվել է Խաչանիշ Թուրքական դրոշակ»[30], — դրում է Թուրք ազգայնամոլ պատմաբանը, բայց նա չի անդրադառնում անգամ իր հակասությանը. մի՞թե հնարավոր էր, որ իսլամական պետություն խաչանիշ դրոշ գործածեր։

Իրողությունն այն է, որ էլիսանական տիրապետության ժամանակաշրջանում դեռ գոյություն են ունեցել քրիստոնյա վասալ իշխանություններ. նույնպիսի դրության մեջ են եղել նաև Սեբաստիայի հայ իշխանները, ինչպես ապացուցում է (նկ. 12) նրանց դրոշակի երկու սիմվոլների՝ քառակուսու և խաչի համատեղությունը։ Մենք պատմաբաններին ենք թողնում այս կարևոր հարցերի լուսաբանումը, հուսալով մանավանդ, որ մեր կազմած երկրորդ տախտակում ներկայացված դրոշները այդ ուղղությամբ կարող են հետաքրքրություն արթնացնել։

30 Նույն տեղում, էջ 191։